

# ՊԵՏ ԱՎԱՄՈԱՄԱՐԿԱՆՔ

## ՄԻ ԱՎԱՄՈԱՄԱՐԿԱՆՔ

(Աշված քվերը սաղմուների համարմերմ են)

Երանելի Օգոստինոսը Վստվածաշնչի 150 սաղմուներից ընտրաքաղելով առանձին քառեր, բառակապակցություններ ու նախադասություններ, կամ եւ վերաշարադրելով դրանք, ինչպես նաև բացահայտելով կամ պարզապես մատուցելով դրանց իմաստը, հյուսեց սույն սաղմոսը իր մոր՝ Մոնիկայի համար:

Ամենակարող Տեր Աստված, Հավիտենական փառքի Թագավոր, Դու գիտես, որ միայն այն մարդն է երանելի, ով արհամարհելով մեղավորների ճանապարհը՝ Քո օրենքի պատվիրանների մասին է միայն գիշեր-ցերեկ խորհում<sup>1</sup>: Սովորեցրու ինձ՝ մեղավորիս, ի սրտե, երկյուղով ու դողալով և դողով հավատարմորեն ծառայել Քեզ<sup>2</sup>: Եվ երբ իմ ձայնով խոնարհաբար կանչեմ Քեզ<sup>3</sup>, լսիր<sup>4</sup> և ողորմածաբար ականջ դիր իմ խոսքերին<sup>5</sup> և զայրույթով<sup>6</sup> մի՛ լքիր ինձ՝ մեղավորիս, որպեսզի չհափշտակի հին թշնամին և առյուծի նման հոշոտի ինձ, և չգտնվի մեկը, որ «փրկի ինձ և պահպանի»<sup>7</sup>: Սակայն Դու, Տե՛ր, -ի՞նչ հրաշալի է Քո անունը ողջ աշխարհում, և Քո փառքը որքա՛ն վեր է երկնքից<sup>8</sup>, -արա այնպես, որ թշնամիներս, ետ դառնալով, թուլանան ու կորչեն Քո առջեկից<sup>9</sup>, որպեսզի չկարողանան բռնել իմ հոգին կրակե ցանցով, և «հուրը, ծծումքն ու փոթորիկի շունչը»<sup>10</sup> ինձ չոչնչացնեն:

Աղքատի տառապանքի և տնանկի հեծության համար ե՛լ<sup>11</sup>, նայիր և լսիր ինձ, Տե՛ր<sup>12</sup>, որովհետև Դու աղքատի մտածմունքն ես և ես հույսը նրա<sup>13</sup>: Տուր ինձ, Աստված իմ, ընթանալ անբասիր և արդար գործեր կատարել<sup>14</sup>. Թող իմ ժառանգության բաժինը Քո ողորմածության շնորհը լինի<sup>15</sup>: Պահպանիր ինձ աչքի բբի պես, Քո թևերի հովանու տակ ծածկիր ինձ<sup>16</sup>, որովհետև Դու իմ զորությունն ես, իմ պահպանիչը և իմ ապավենը<sup>17</sup>: Իմ մեղքերի գաղտնիքներից մաքրիր ինձ և օտարներից պահպանիր

Քո ծառային, Տեր<sup>18</sup>: Առաքիր ինձ օգնություն սրբարանից<sup>19</sup> և իմ սրտի ցանկացածը<sup>20</sup> իրագործիր: Ազատիր ինձ առյուծի բերանից<sup>21</sup>, և արդարության ճանապարհով առաջնորդիր ինձ<sup>22</sup>, որպեսզի ես կարողանամ բարձրանալ Քո լեռը և կանգնել Քո սուրբ վայրում, մաքուր ձեռքերով և անբիծ սրտով<sup>23</sup>: Իմ մանկության և տհասության մեղքերը մի՛ հիշեր<sup>24</sup>: Մի՛ կործանիր ինձ ամբարիշտների հետ<sup>25</sup> և ինձ նեղողների ձեռքը մի՛ մատնիր<sup>26</sup>, այլ ողորմածաբար լսիր պաղատանքիս ձայնը<sup>27</sup> և ականջ դիր Քո սուրբ անվան փառքը<sup>28</sup> օրհնաբանողիս և ողորմիր ինձ<sup>29</sup>:

Լսիր ինձ, քանզի հույսս դրի Քեզ վրա, Տե՛ր, թող հավետ ամոթով չմնամ<sup>30</sup> և ներիր իմ մեղքերի ամբողջ ամբարշտությունը<sup>31</sup>: Թող ողորմությունդ, Տե՛ր, լինի իմ վրա, ինչպես որ, իմ հույսը դրեցի Քեզ վրա<sup>32</sup>, և իմ բոլոր նեղություններից փրկիր ինձ<sup>33</sup>. ասա ինձ, թե, Քո փրկությունը ես եմ»<sup>34</sup>, քանզի ես թևերիդ հովանուն պիտի ապավինեմ<sup>35</sup>: տուր ինձ իմ սրտի ուզածները<sup>36</sup> և ուշ դարձրու, որ ինձ օգնես, ո՛վ իմ փրկիչ Տեր<sup>37</sup>: Տե՛ր, ցույց տուր ինձ, թե ե՞րբ է իմ վախճանը և որքան է կյանքիս օրերի թիվը, որպեսզի իմանամ, թե ինչքան կորուստ եմ ունեցել<sup>38</sup>: Լսիր, Տեր իմ աղոթքը և հանիր ինձ տառապանքի փոսից, ցեխից, տիղմից և ոտքերս հաստատիր ժայռի վրա և ուղիր իմ քայլերը<sup>39</sup>: Փորձանքի օրը փրկիր ինձ, Տեր<sup>40</sup>, որպեսզի մտնեմ Աստծո տան սքանչելի հարկի տակ՝ ցնծության ու օրհնության ձայնով<sup>41</sup>, քանի որ Դու ինձ ուժ տվողն ես, Աստվա՛ծ<sup>42</sup>: Մի՛ շեղիր իմ շավիղը Քո ճանապարհից,<sup>43</sup> որպեսզի սիրեմ արդարությունը և ատեմ անօրենությունը<sup>44</sup>: Եղիր ինձ համար ապավեն և զորություն,<sup>45</sup> քանզի Դու մեծ թագավոր ես ամբողջ երկրի վրա<sup>46</sup>: Աստված մեր հավիտյանս հավիտենից,<sup>47</sup> փրկիր իմ հոգին, «Երբ դժոխքն ինձ ընդունելու լինի»<sup>48</sup>: Երբ Դու գաս դատելու Քո ժողովրդին,<sup>49</sup> ողորմիր ինձ, Աստված, Քո մեծ ողորմությամբ, և Սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից: Գթառատ Տեր, այդ ժամին երեսդ շուռ տուր իմ մեղքերից և իմ բոլոր հանցանքները ջնջիր ինձնից: Իմ մեջ մաքուր սիրտ հաստատիր, Աստված, և արդար հոգի նորոգիր իմ որովայնում<sup>50</sup>, որպեսզի ես պտղաբեր ձիթենու նման ընդունելություն գտնեմ Աստծո տանը<sup>51</sup> ու ցնծամ Հակոբի հետ և Իսրայելի հետ ուրախ լինեմ<sup>52</sup>: Աստված, Քո անվամբ փրկիր ինձ և Քո զորությամբ արդար հանիր ինձ<sup>53</sup>: Խնդրանքներս մի՛ անտեսիր,<sup>54</sup> այլ ողորմի՛ր ինձ<sup>55</sup>: Ուղարկիր

ողորմությունդ և ճշմարտությունդ, Աստված, և նախատելի դարձրու ինձ  
ոտնահարողներին<sup>56</sup>, փշրիր նրանց ատամներն իրենց բերանում և կոտրա-  
տիր ժանիքները առյուծների<sup>57</sup>: Դու Աստված իմ, իմ պաշտպանն ու ապաս-  
տանը<sup>58</sup>, Քո աջով պահպանիր ինձ<sup>59</sup>, և ես կծածկվեմ Քո խորանում ու  
թևերիդ հովանու տակ,<sup>60</sup> Երբ յուրաքանչյուրին հատուցես ըստ իր գործե-  
րի<sup>61</sup>: Հոգիս ծարավ է Քեզ<sup>62</sup>, թաքցրու ինձ չարագործների ամբոխից<sup>63</sup>: Երբ  
Քեզ մոտ գա ամեն մի մարմին<sup>64</sup>, մի վանիր Քո ողորմությունը ինձնից,<sup>65</sup>  
այլ «ցույց տուր երեսդ և գթա» ինձ<sup>66</sup>: Աստված մեր կենարար Աստվածն  
է<sup>67</sup>, բարեհաջող արա իմ ուղին, Աստված, որպեսզի ջրերի հորձանքները  
չկլանեն ինձ և անդունդներն ինձ չընկղմեն<sup>68</sup>: Օգնականն ու փրկիչն իմ  
Դու ես Տե՛ր իմ, մի՛ ուշացիր<sup>69</sup>, քանի որ Տե՛ր, հույսս Քեզ վրա դրի, թող  
հավետ ամոթով չմնամ<sup>70</sup>: Երբ սկսես դատել Քո ժողովրդին<sup>71</sup> իրենց անձը  
Քեզնից հեռացնողները պիտի կորչեն<sup>72</sup> և այնժամ, թող ես ամոթով ետ  
չդառնամ<sup>73</sup>, քանզի Դու, արդա՛ր Դատավոր, ցածրացնում ես մեկին և մյու-  
սին բարձրացնում<sup>74</sup>: Դու ահավոր ես, և ո՞վ կարող է կանգնել Քո առջե<sup>75</sup>,  
Դու ես հրաշագործ Աստվածը<sup>76</sup>: Ինչպես որ Դու հացով կերակրեցիր Քո  
ժողովրդին և անապատում իրենց ցանկացածը տվեցիր նրանց,<sup>77</sup> այնպես էլ  
ինձ՝ սովյալիս, թող հագեցնի Քո բարությունը, և թող «ողորմությունդ  
շուտով հասնի» ինձ<sup>78</sup>: Արտասուքի հաց<sup>79</sup> առաքիր սգի ժամանակ և  
ժայռերից հոսող մեղրով հագեցրու<sup>80</sup>, որպեսզի ես ստանամ ներքին քաղց-  
րություն: Աստված, որ քննում ես գործերը արդարների և մեղավորների,<sup>81</sup>  
Դու, որ միակ Բարձրյալն ես ամբողջ երկրի վրա<sup>82</sup>, լսիր իմ աղոթքը<sup>83</sup>,  
ողորմիր ինձ և օրհնիր ինձ, Օրենսդի՛ր ներիր իմ անիրավություններն ու  
ջնջիր իմ բոլոր մեղքերը<sup>84</sup> և փրկիր, Աստված իմ, Քո ծառային, որ հույսը  
դրել է Քեզ վրա<sup>85</sup>: Աստվա՛ծ, որ հաստատում ես Քո եկեղեցին սուրբ  
լեռների վրա,<sup>86</sup> թող աղոթքս հասնի Քեզ, Տե՛ր, ականջդ թող մոտենա  
խնդրանքների<sup>87</sup>: Թող Քո ձեռքը լինի<sup>88</sup> ինձ հետ, որպեսզի երեկոյան  
չթառամեմ, չչորանամ և չընկնեմ<sup>89</sup>. այլև փրկիր ինձ «որսորդի թակար-  
դից և ցերեկվա սլացող նետից»,<sup>90</sup> որպեսզի ես, լինելով Տիրոջ տանը  
տնկված, ծաղկեմ «արմավենու պես» և բազմանամ «Լիբանանի մայրիների  
պես»<sup>91</sup> երկար օրեր<sup>92</sup>: Եղիր իմ ապավենը, իմ հույսի օգնականը,<sup>93</sup> Աստված  
իմ, մեծ թագավոր ողջ աշխարհում<sup>94</sup>: Երբ սկսես դատել տիեզերքն արդա-

րությամբ, և բոլոր ժողովուրդներին՝ Քո ճշմարտությամբ<sup>95</sup>, այնժամ թող բերկրեմ հավիտենական լույսով, որ ծագում է «արդարների համար»<sup>96</sup>, որպեսզի Քո «աջն ու սուրբ բազուկը» փրկի ինձ<sup>97</sup>: Ո՞վ բազմում ես քերովբեների վրա նստողդ,<sup>98</sup> արա այնպես, որ ես աղաղակեմ Քո առջև՝<sup>99</sup> իմ տան մեջ սրտիս անարատությամբ»: Եվ «ծուռ սիրտ ունեցողը» թող ինձ չմոտենա, այլ թող աչքերս սևեռվեն երկրի հավատացյալներին և թող ապրեմ նրանց հետ՝ գնալով «անբիծ ճանապարհով», երբ Դու դատաստանով Քո «քաղաքից վերացնես բոլոր անօրենություն գործողներին»<sup>100</sup>:

Տե՛ր, լսիր իմ աղոթքը, աղաղակս թող հասնի Քեզ: Մի՛ շրջիր երեսդ ինձնից, նեղությանս օրը ինձ մոտեցրու ականջը Քո<sup>101</sup>:

Ողորմած եղիր իմ հանդեպ, իմ բոլոր գործերում փրկիր իմ «կյանքը ապականությունից», հագեցրու «բարությամբ ցանկությունը» իմ<sup>102</sup>: Դու որ նայելով երկրին՝ դող ես պատճառում նրան,<sup>103</sup> Դու, որ եգիպտոսից հանեցիր Քո «ժողովրդին ցնծությամբ և Քո ընտրյալներին ուրախությամբ»<sup>104</sup>, օգնիր ինձ պահել «իրավունքը և ամեն ժամ արդարություն» գործել,<sup>105</sup> հանիր ինձ խավարից և մահվան ստվերից<sup>106</sup>, որպեսզի պատրաստ սրտով գոհություն մատուցեմ և սաղմոս երգեմ Քեզ<sup>107</sup>: Տուր ինձ նշան բարության իմ փրկության համար, ինչպես վայել է անվանդ, քանզի քաղցր է ողորմությունը Քո,<sup>108</sup> և թող Քո սրբերի վայելչությամբ<sup>109</sup> արդարների ժողովում, հավաքույթի մեջ<sup>110</sup> իմ «արդարությունը մնա հավիտյանս հավիտենից», և իմ «եղջուրը բարձր լինի փառքով»<sup>111</sup>: Եվ երբ Դու կպատվիրես ինձ՝ աղքատիս, բարձրանալ «գետնից» և վեր կքաշես տառապյալիս «աղբանոցից»<sup>112</sup>, ես կօրհնեմ Քեզ «այսուհետեւ մինչև հավիտյան»,<sup>113</sup> և թող ողջերի երկրում հաճելի լինեմ Քո առջև՝<sup>114</sup> Քանդիր «իմ կապերը»<sup>115</sup> և թող Քո «ողորմությունը հաստատվի» ինձ վրա<sup>116</sup>: Երբ «նեղության ժամանակ» կանչեմ Քեզ, Տե՛ր, լսիր ինձ<sup>117</sup>: Տե՛ր, իրավունքիդ ճանապարհի օրենսգետն ինձ դարձրու, որ ամեն ժամ հետեւմ դրան: Իմաստուն դարձրու ինձ, որ քննեմ Քո օրենքը և ամբողջ սրտովս պահպանեմ այն: Մոլորվեցի կորուսյալ ոչխարի պես՝<sup>118</sup> փնտրիր և փրկիր ինձ<sup>119</sup>: Հսկիր իմ «մուտքն ու ելքը»<sup>120</sup>, որպեսզի իմ ոտքերը հասնեն ու կանգնեն, դռներին Քո երուսաղեմի<sup>121</sup>: Աչքերս դեպի Քեզ բարձրացրի, Տեր. Դու, որ բնակվում ես երկնքում՝<sup>122</sup>, փրկիր ինձ «որսորդի թակարդից»<sup>123</sup>, որպեսզի

Ես իմ ձեռքերը չերկարեմ «անօրենության»<sup>124</sup>: Թող իմ բերանը «խնդությամբ» լցվի և իմ լեզուն՝ ցնծությամբ<sup>125</sup>: Մի թող ինձ ամոթի մեջ մնամ<sup>126</sup> և օրհնիր ինձ Սիոնից, որպեսզի ես տեսնեմ «բարությունը Երուսաղեմի»,<sup>127</sup> և թող ամոթահար լինեն նրանք, ովքեր ատում են Սիոնը<sup>128</sup>:

Թող Քո ականջները լսեն ձայնն իմ աղոթքի<sup>129</sup>, Քո ծառայի, ո՛վ Տեր: Թող սիրտս չգոռողանա և աչքերս վերևից չնայեն,<sup>130</sup> այլ թող կենան խոնարհությամբ, մինչև Հակոբի Տեր Աստծո համար խորանի տեղ չգտնեմ<sup>131</sup>: Այնտեղ որտեղ Դու պատրաստեցիր օրհնությունն ու կյանքը հավիտենական<sup>132</sup>, այդտեղ ես կբարձրացնեմ իմ ձեռքերը դեպի սրբություն և կօրհնեմ Քեզ<sup>133</sup> Նրան Ով պիտի դատի իր ժողովրդին և մխիթարի իր ծառաներին<sup>134</sup>: Աստված աստվածների և Տեր տերերի<sup>135</sup>, լալիս եմ<sup>136</sup> և երկրպագում եմ Քո սուրբ տաճարի առջև<sup>137</sup>. Փորձի՛ր ինձ Աստված, ու ճանաչի՛ր իմ սիրտը, քննի՛ր ինձ ու ճանաչի՛ր իմ շավիղները, և տե՛ս, իմ ճանապարհին անօրենություններ կան, առաջնորդիր ինձ Քո հավիտենական ճանապարհներով<sup>138</sup>: Պահպանիր ինձ, Տեր, մեղավորի ձեռքից, և չար մարդուց փրկիր ինձ<sup>139</sup>: Տե՛ր, թող աղոթքս Քեզ ուղղվի որպես խունկ<sup>140</sup>: Տե՛ր, բանտից հանիր ինձ, որ գոհություն մատուցեմ Քո անվանը<sup>141</sup>: Տեր, լսիր աղոթքն իմ, Քո ճշմարտությամբ ականջ դիր իմ խնդրանքին և ծառայիդ հետ դատաստան մի՛ տես: Լսի՛ր ինձ փութով, Տե՛ր, քանզի շունչս պակասեց իմ ներսում<sup>142</sup>, Դո՛ւ ես իմ Աստվածը՝ Ողորմությունս, Ապավենս և իմ Պահպանիչս<sup>143</sup>: Դու «մեծ» ես ու «անչափ օրհնյալ» և Քո «մեծությունը սահման չունի»<sup>144</sup>: Շնորհի՛ր արդարություն զրկյալին, արձակի՛ր բանտարկյալին, բաց աչքերը կույրերի<sup>145</sup> և կառուցիր Երուսաղեմը, Տե՛ր<sup>146</sup>: Երբ ամրապնդես դռների նիգերը,<sup>147</sup> թող ես էլ բնակվեմ այնտեղ Քո որդիների հետ: Ինչպես որ գովում են Քեզ հրեշտակները և Քո բոլոր զորությունները<sup>148</sup> Երկնքի Արքայությունում, նույնպես էլ ես՝ սուրբերի ժողովում ուրախանալով նրանց հետ փառքով:<sup>149</sup> Թող գովաբանեմ և փառավորեմ լսելի բառերով<sup>150</sup> Քո սուրբ և փառավորյալ անունը անվախան հավիտյաններում: Ամեն: